




ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱԾՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ*

Սպասարորություն հարկանել (ծառայել),
Հարին սպասարորություն անցուցանելով
գարքայ (Բ Թագ. ԺԺ, 18): Յարտասուս
հարկանել. ի գութ յարտասուս... հարկանել
(Գ Մակ. 2. 16) և այլն: Իսկ եթե սրանց
վրա ավելացնենք նաև կրավորակերպի
նշանակությունը, ապա պարզ կլինի, թե
հենց առաջին իսկ գրական բեմելին ինչ-
պիսի իմաստային բեռնավածությամբ էր
փայլում մեր լեզուն, որ մեզ է հասցրել
Աստվածաշունչը. Յոյժ հարեալ էր ի դըս-
տերն Յակոբայ (սիրահարված էր. Ծմն.
ԼԴ, 19): Զագահութեան հարկանել (տրվել
ազահութեան). Որ ունին սիրտ հարեալ
զագահութեան (Բ Պետ. Բ, 14): Զեռք տալ,
դիպել, վատություն անել. Ամենայն, որ
հարկանիցի ընդ այդ կամ ընդ կին դորա,
սահույարտական լիցի (Ծմն. ԻԶ, 11): Ա-
ռընչակցել, առնչվել, հարաբերակցվել. Ա-
մենայն, որ հարկանիցի ընդ նա (դաշտա-
նով կնոջ), պիղծ լիցի (Ղևտ. ԺԵ, 19): Եւ
կենդանիքն, որ ոչ էին մեռեալ, հարան
յերաստանս իրեանց. վարակվեցին թան-
չով (Ա Թագ. Ե, 12): Մոտենալ կպչել,
դիպել. Քանզի անջրպետություն ետ տանն
շուրջանակի արտաքուստ կողմանէ տանն,
զի մի հարկանիցին ընդ որմս տանն (Գ
Թագ. 2, 6): Աճել, բուսնել. Հարան յիս
փուշք (Մաղմ. ԼԱ, 4): Քաղվել: Հարա
որպէս խոտ, ցամաքեցաւ սիրտ իմ (Մաղմ.

ԾԱ, 5): Բռնվել, ընկնել, ցանցվել. Որպէս
թոշունք որսացեալք ի ծողակս, նոյնպէս
հարկանին յորագայթս որդիք մարդկան
(Ժող. Թ, 12): Հարան շացութեամբ (կու-
րացան. Իմաստ. ԺԺ, 16): Ի վերայ գորու-
թեան հարկանել (Ունեցվածքը կողոպտել).
եւ մի ի վերայ հարկանիցիս գորութեան նո-
ցա յաւոր կորստեան նոցա (Աբդ. 13):

Իմաստային հարստությամբ և հետաքրք-
րական զանազանությամբ են հանդես
գալիս ածել և բերել բայերը: Ածել բայի
հիմնական նշանակությունն է առաջնորդե-
լով բերել, հետը քալեցնելով բերել. օրի-
նակ՝ Եւ կոչէին արտաքս Զոդովտ և ասէին
ցնա.—Ո՞ր են արքն, որ մտին առ քեզ
գիշերի, ած գնոսա առ մեզ (Ծմն. ԺԺ,
5): Մյուս կարևոր նշանակությունը, որ մոտ
է նախորդին և հավասար է նրան իր կի-
րառության չափով, Քշել բերել-ն է, առաջը
գցելով վարել բերելն է. օրինակ՝ եւ Մով-
սէս ած գիաշինսն յանապատ (Ելք Գ, 1):
Առաջացնելով վրա բերել, առաջ բերել,
գոյացնել: Ածից եւ անձրն ի վերայ երկրի
(Ծմն. Է, 4): Ահա և ածից ջրհեղեղ ջրոյ
(նույն տեղում, 2, 17): Ածել մեղս (մեղքի
տակ գցել). Միթէ մեղա՞ք ինչ քեզ, զի ա-
ծեր ի վերայ իմ և ի վերայ թագաւորու-
թեան իմոյ մեղս մեծամեծս (նույն տեղում,
Ի, 9): Ածել անգիտություն (անգիտության
մեջ դնել). Սակաիկ մէսս ևս մտեալ էր ու-
րումն յագգէ իմմէ առ կին քո, և ածէիր ի
վերայ մեր անգիտություն (նույն տեղում,
ԻԶ, 10): Ածել անձս (անեծք բերել). եւ

* Ծարուակված «Էջմիածին» ամսագրի 1977
թվականի № ԺԱ-ից և 1978 թվականի № Ա-ից:

ածիցեմ ի վերայ իմ **անձն** և ոչ օրհնութիւն (նոյն տեղում, ԻԷ, 12): Հարուած ածել (հարված հասցնել). Այլ մնա եւ հարուած ածից ի վերայ փարաւոնի և ի վերայ եգիպտոսի (Ելք ԺԱ, 1), **Լցնել**. Չի մտին երիվարք փարաւոնի կառօք և հեծելովք նորա ի ծով, և ած ի վերայ նոցա **զգորս** ծովուն (Ելք ԺԱ, 19): **Ախտ ածել** (ցալ տարածել). Չամենայն զախտն, զոր ածի ի վերայ եգիպտացոցն, ոչ ածից ի վերայ քո (Ելք ԺԵ, 26): **Կապել**, փաթաթել. եւ ածցես նոցա կամարս Ահարոնի և որդոց նոցա և ածցես նոցա ապարօշս (Ելք ԻԹ, 9): Անօրէնութիւն ածել (անօրէնութեան մեջ գցել) Աձէ զանօրէնութիւն հարց յորդիս և յորդոց յորդիս (Ելք ԼԴ, 7): **Դողումն ածել** (տարաւի գցել). Ածից դողումն ի սիրտս նոցա (Ղևտ. ԻԶ, 36): **Յաւարի ածել** (աւարել). Եւ եղև աւելորդ աւարին, զոր ածին յաւարի արքն պատերազմօրք քչխարաց վեց հարկեր հազար... (Թիւք ԼԱ, 32): **Ի վերայ ածել** (հանել. վեր կացնել, դուրս բերել). Ածցէ ի վերայ քո ազգ ի հեռաստանէ ի ծագաց երկրի (Բ. Օրէնք ԻԸ, 49): **Բան ածել** (խոսել). Նոյնպէս ածցէ տէր ի վերայ ձեր զամենայն բանս չարս (Յեսու ԻԳ, 15): Ցաւս և աշխատութիւնս ի վերայ ածել (ցալ ու տատապանք թափել). Եւ ցաւս և աշխատութիւնս աձէ թերափոյ ի վերայ (Ա. Թագ. ԺԵ, 23): **Ստուերածս ածել** ի վերայ աշաց (մթնեցնել). Ածիցէ ստուերածս ի վերայ աշաց մերոց (Բ. Թագ. Ի, 6): **Չարիս ածել ի վերայ ուրումն** (մեկին չարիքներ հասցնել). Ահա եւ ածից ի վերայ քո չարիս (Գ. Թագ. ԻԱ, 21): **Չուր ածել** (ջրմուղով ջուր բերել). Եւ ած ջուր ի բաղարն (Գ. Թագ. Ի, 20): **Ի կատարումն ածել** (գլուխ բերել) ի կատարումն ածել զպատրաստութիւն տան քո (Ա. Մնաց. ԻԹ, 19): **Աձել ի հարկատու** (վերածել հարկատուի). Աձ գնոսս Սողոմոն ի հարկատուս (Բ. Մնաց. Ը, 8): **Ջերդումն ածել ի վերայ ուրումն** (մեկին երդվեցնել, մեկի վրա երդում դնել). **Աձ ի վերայ մեր զերդումն** (Յուդիթ Ը, 28): **Բարկութիւն ածել** (բարկանայ): Աստուած... ոչ աձէ զբարկութիւն իւր զօրհանապազ (Սաղմ. Է, 12): **Ի լոյս ածել** (երևան բերել). **Ի լոյս աձէր** անարատ պահել (Գ. Մակ. Զ, 3): **Լեզու ածել** (խոսել). Եղին լերկին գերբանս իրեանց և զլեզուս իրեանց աձէին զերկրս (Սաղմ. ԶԲ, 9): **Ջրօսան ածել ի վերայ ուրումն**. Չամենայն զրօսանս քո աձէր ի վերայ իմ (Սաղմ. ԶԷ, 8): **Ակն ածել**. (Որ ակն աձէ գերեսս, եւ ածից զապխն ի բժշկութիւն (Երեմ. ԼԳ, 6). **Աձել զգլխով** (գլուխը խոզել). Եւ դու որդի մարդոյ, առ բեզ տաւեր խամամոր, բան զսրբիչ վարսավիրայից.

առանալցես զայն բեզ և **ածիցես** զայն զգլխով քով և զօտոտօք (Եզեկ. Դ. 1): **Սուր ածել ի վերայ**. Եւ աձես ի վերայ ձեր սուր (Եզեկ. Զ, 3): Աչապես նաե՛ **ժամանակ ածել**, սով ածել, շունչ ածել, մայմին ածել, ձեռն ածել, ապտակ ածել, անձրեւ ածել, ցանգ ածել, ապաշխարութիւն ածել:

Իսկ **բերել** համանիշ բայք, որ կրկնակի անգամ քիչ է գործածված (458/214) աձել բայից, առաջին նշանակությունն է վերցրած մոտեցնել, բեռնած բերել, **մարմնի վրա առած մոտեցնել**. Բեր մատտ ինձ, գի կերպց (Մենդ. ԻԷ, 4): Թուրեմ... եգիս խնձոր... Եւ երբ զայն առ կիս մայր իւր (Մենդ. Լ, 14): Բերի՛ց ջուր լուսնայ գոռս նորա (Մենդ. ԽԴ, 24): **Ջրոց բերել**. Բերաք նմա զրոց քստ մոաց նորա (Յեսու. ԺԴ, 7): Բանս բերել. Եւ զբանս նորա էին, որ բերէին առ իս (Նեեմի Զ, 19): Աւետիս բերել, Օրհնութիւն բերել, համարձակութիւն բերել, (Սերմն) բերել քնդ միոյ երեսուն (Մարկ. Դ, 8): Երկիրն ինքնից բերէ զպրտող (Մարկ. Դ, 28): **Օգուտ բերել**, յառաջ բերել:

Աձել և բերել համանիշ բայերը որոշակի զանազանվում են թե հիմնական և թե փոխաբերական նշանակություններով, (մասնավոր դարձվածաբանական կառուցվածքով): **Բերել** բայք, որ կրկնով **բերել** է նշանակում, երբեմն կիրառվում է **բառնայ բերել** զուգադրությամբ (բերէին անդամալոյժ մի բարձնայ (Մարկ. Բ 3): Իսկ **աձել** բայք ստանց որևէ շեղումի նշանակում է բշկով բերել, **բայեցնելով բերել**, բայց ոչ մի անգամ չի նշանակում **վերցրած բերել**: Ավելի բան 450 գործածությունից միայն մի կասկածելի կիրառություն ունի, օրինակ՝ Եւ յաւորն ուրերորդի ւձցէ երկուս տատարակս կամ երկուս ձագս աղանձաց առ քանանայն ի դուռն խորանին վկայութեան (Թիւք, Զ, 10):

Աձել բայք անհամեմատ հարուստ է իր բազմազան կիրառություններով, իմաստային լայն դաշտերով և դարձվածաբանական կառուցվածքով:

Համանիշները ոչ միայն զանազանվում են իրենց նրբերանգներով. դրանք ունեն նաեւ մի հիմնական զանազանություն, որ դրանց յուրահատուկ անկախություն է շնորհիւ, այսպէս **Խօսք** բառի բուն նշանակությունը գործողությունն արտահայտելն է. **խօսք** գործողության գոյական է. Դադարեաց ինքն ի խօսից իրոց (Ելք ԼԱ, 18): Իբրև լեռաց ի խօսիցն (Ղուկ. Ե, 4): Իսկ **բան** բառը, որ **խոսք** է նշանակում, ունի անկախ գոյականական նշանակություն առանց գործողական իմաստի. օրինակ՝ Եւ մեկնեաց նմա Սողոմոն զամենայն բանս

նորա (Գ թագ. Ժ, 3): Այս հիմնական գաճազանությունն է պատճառը, որ բան բաժնի կիրառված է մոտ 900 անգամ, իսկ խոսք միայն 36 անգամ:

Գիշեր և **ցայգ** բառերը համանիշ են, սակայն **ցայգ** ոչ մի գոյականային գործածություն չունի, միայն կիրառվում է մակբայաբար, իսկ **գիշեր** և գոյական է և մակբայ. նստիցիք զեօթ օր՝ զցայգ և զցերեկ (Ղևտ. Ը, 35): Ջիսարան կոչեաց **գիշեր** (Ծննդ. Ա, 5): Կիրառության հաճախականությունը երկու բառի անհամեմատելի են. **գիշեր** կիրառված է ավելի քան 250, իսկ **ցայգ** 35 անգամ: Այդպես էլ **կրակ** և **հուր** բառերը. ինչպես երևում է **կրակ**-ը ժողովրդախոսակցական է, իսկ **հուր**-ը գրական, սակայն որոշակի է նաև սրանց համանիշային գաճազանությունը. **կրակ** ավելի նշանակում է առանց բոցի **հուր**, իսկ **հուր**-ը բոցով կրակ է. օրինակ՝ Առցես դու աճիմախսուն կրակ (Տոմար. Զ, 18): Եւ երևցաւ նմա հրեշտակ տեսուն բոցով հրոյ ի միջոյ մորենոյ. և տեսանէր զի մորենին վառեալ էր հրով, և ոչ այրէր մորենին (Եւր. Գ, 2): Եւ ընթանայր հուր ընդ Երկիրն (Եւր. Թ, 23): Սրանք ևս իրենց հաճախականությամբ անհամեմատելի են. մինչդեռ **կրակ** բառը 8 կիրառություն ունի, իսկ **հուր**-ը ավելի քան 450 հաճախականությամբ է հանդես գալիս:

Համանիշները հետաքրքրական լեզվական հատկանիշներ են հանդես բերում. այն համանիշները, որոնց հաճախականությունը սակավ է, դարձվածքային եզրերով քիչ են հանդես գալիս, կամ բնավ չեն դառնում այդպիսի եզրեր. բառաբարդության մեջ իբրև բաղադրիչներ նույնպիսի վիճակ ունեն և ածանցումներն ու արմատական այլևայլ ձևերը նույնպես քիչ են.

Օրինակ՝ **կրակ** բառը մի անգամ ունի **կրակաբեր**, 4 անգամ **կրակարան** և մեկ անգամ **կրակետոյ** և ոչ մի դարձվածքային ձև չունի: Հուր բառը կազմում է դարձվածքներ. **հուր** ելանել, **հուր** դնել, **հուր** անկանել, **հրոյ** տալ, **հուր** արկանել, ի **հուր** մատնել, **հրով** դատել, **հուր** ուտել, **հուր** գանձել, **հուր** հարկանել, ի **հուր** փորձիր **ոսկի**, **հրոյ** ճարակ տալ և այլն: Իսկ իբրև բարդության բաղադրիչ **հուր**-ից ունենք հրայրեաց, հրաշէկ, հրաշունչ, հրատ, հրացան, հրդեհ, հրդեհել, հրեղէն, հրկէզ, հրկէզ առնել, հրկիզել, հրձիգ, հրձիգ առնել, կապակցությունների մեջ:

Հետաքրքրական գաճազանություններ են դրսևորում **կտրել** և **հատանել** համանիշները: **Կտրել** բայը հաճախված է ընդամենը քսան անգամ. բուն նշանակությունն է խուզել ու նաև հատել (Ահա սկեսարայր

քո ելանէ ի Թամնա կտրել զխաշինս (Ծննդ. ԼԸ, 13): Կտրեցին զձեռս և զոտս նոցա (Բ թագ. Դ, 12): Այս բայը ունի միայն մի արմատական կիրառություն ևս **կտորք** ձևով, որ նշանակում է **ոչխարի խուռ**: Մինչդեռ **հատանել** բայը հաճախված է ավելի քան 60 անգամ, ունի բազմազան նշանակություններ, դարձվածքային միավորներ և բառակազմական ճյուղավորված ցանց:

Հատանել բայի առաջին նշանակությունն է մի սուր բանով կտրել.

Եւ հատի գտտուն հանդերձի քոյ (Ա թագ. ԻԴ, 12): Զլեզուն հրամայեաց զանօրէն Նիկանովայ **հատանել** (Բ Մակ. ԺԵ, 23):

2-րդ նշանակությունն է **սպառել**, վերջացնել. Զպտող կալոյ քոյ և հնձանի մի **հատանիցես** (Եւր. ԻԲ, 29): 3-րդ նշանակությունն է **պակասեցնել**, **զեղչել**: Եւ զսակ զաղիսարկին որպէս գործէին հանապազ, արկէք ի վերայ նոցա. մի **հատանիցէք** ինչ անտի (Եւր. Ե, 8): **Հատանել** փոքր ինչ ի գնոյ անտի նորա (Ղևտ. ԻԷ, 18): 4-րդ կոտորած անել, ջարդ տալ: Հատին երեք զօրավարք զբանակն այլազգեաց (Բ թագ. Ի Գ, 16): 5-րդ կրճատել. Մի **հատանիցես** ինչ ի բանիցդ (Եւր. ԻԶ, 2): 5-րդ **ճեղքելով ճանապարհ բանալ**. Արքայն Մովսարայ... առ ընդ իւր ելթն հարերս այր սուներսմիզս հատանել երթաչ առ արքայն Եղովմայ և ոչ կարացին (Դ թագ. Գ, 26): 6-րդ **Դադարեցնել**. Եհաա Աստուած զամենայն արտօսր յաչաց նոցա (Յայտ. Է, 17): 7-րդ. **Զրկել**, չտալ. ջուր ծարաւեաց ոչ արբուցեր, այլն զհաց քաղցելոց հատեր (Տոմար. ԻԲ, 7): Եւ հատցէ Աստուած զբաժին նորա ի ծառոյն կենաց և քաղաքէն սրբոյ (Յայտ. ԻԲ, 19): 8-րդ. **Քաղել**. Եւ անուանեցին զանուն տեղոյն Զոր ողկուզոյ, վասն ողկուզին, զոր հատին անտի որդիքն Իսրայելի (Թիւք ԺԳ, 25): 9-րդ. անցնել, զծել. Եւ **հատանէ** սահմանն ի թիկանց Ակկարոնի ընդ հիւսիսի (Յեւ. ԺԵ, 10): 10-րդ. Կտոցել, կանգնեցնել. Եւ եկն յԵրուսաղէմ և եհաա զայարիսայն Երուսաղէմի ի դրանէ Եփրեմի մինչև ցողուն Անկեանցն (Դ թագ. ԺԴ, 13): **Ավարտել**. եղև ոգի իմ առ յինէն իբրև ոստայն սատարաց մերձ ի հատանել (Եւ. ԼԸ, 12): **Վէտս հատանել** (ցտել), ի մարմինս իրեանց վէտս մի հատանիցեն (Ղևտ. ԻԱ, 5): **Գին հատանել** (զին կտրել, զին դնել). **Հատցէ** նմա քահանայն զին (Ղևտ. ԻԷ, 8): **Պղինձ հատանել** (հանքից պղինձ հանել). ի լերանց նորա **հատանիցես պղինձ** (Բ Օրենք Ը, 9): **Գլուխ հատանել** (զխատել). Եհաա զգլուխըն Աղեքսանդր (Ա Մակ. ԺԱ, 17): **Քար**

հատանել. Հատանել քարին կոխածոյս (Ա Մնաց. ԻԲ, 2): Վեմ հատանել (քար կտրել). Իբրև զմորս, որ հատանել զվեմ (Երե. ԻԴ, 29): Բոց հատանել (բոց հանել). Զայն տեսան հատանել զբոց ի հրոյ (Սաղմ. ԻԷ, 7): Յոյս հատանել (հոյսը կտրել). Եհատ իբրև զծառ զյոյս իմ (Յովբ. ԺԹ, 10):

Այսքան հարուստ առումների ու դարձվածքային միավորների հետ հատանել, բայց ունի նաև բառարարդման և այլ ձևերով գործածության ցանց, ինչպես՝ հատ (հատ ցորենոյ), հատավաճառ, հատուցանել, հատուցանող, հատուցիչ, հատուցումն, հատանիլ, հատուցանիլ:

Քար բառը ընդհանուր է, իսկ վեմ-ը գրական. սրանց համանիշային զանազանությունը նույնպես իրական փաստ է: Միևնույն վեմ նշանակում է ժայռ և քարի խոշոր կտոր, փոխաբերաբար ապակեն, հենարան: Ինչպես՝ Եր դուր յարեալք ի վերայ տան հօր իմոյ այսօր և կոտորեցէք զորդիս նորա արս Երթանասուն ի վերայ վիմի միոյ (Դատ. Թ. 18): Բերին վեմ մի և եղին ի վերայ գրոյն (Դան. 2, 17): Տէր վեմ իմ և ամրութիւն իմ (Բ Թագ. ԻԲ, 2): Մի երկու անգամ կիրառված է նաև **նետաքար** նշանակությամբ. Քարկոճեացեն զբեզ վիմօք (Եզե. ԺԶ, 40):

Իսկ քար բառի առաջին նշանակությունը **քարանդուր**-ն է: Եւ ծառայեցես անդ աստուծոց օտարաց փայտից և քարանց (Բ Օրէն. ԻԷ, 64): 2-րդ նշանակությունն է **նետաքար**, որ ամենից շատ է կիրառված. քարակոճեցին զնոսա քարամբք (նույն տեղում, ԻԲ, 24): 3-րդ նշանակությունն է **մեծ քարաբեկոր**. Քարինք որսոց նորա յատուկին (Առակ. ԻԴ, 31): 4-րդ իմաստն է թանկագին քար. Եր ի նմա լուսաւորութիւն նմանեալ ականց պատուականաց քար յառպիս աստուածեսակ և կենդանի (Յալտ. ԻԱ, 11):

Բայց այս վերջինը իբրև ընդհանուր ժողովրդական բառ ունի բազմաթիվ ածանցումներ ու բարդումներ. օրինակ՝ քարածայռ, քարալից, քարածերայ, քարակոխ, քարահատ, քարածիգ, քարայտասկ, քարանայ, քարանձաւ, քարեղէն, քարընդոտնել, քարընկէց, քարընկէցութիւն, քարկոճ, քարկոճել, քարկոտ, քարկոխ: Միևնույն վեմ բառը միայն մի բարդություն ունի՝ **վիմ արգել**:

Քար բառը նաև ունի մի քանի դարձվածքային կապակցություններ. քարինքն աղաղակեն եթէ դոքա լուսեցեն, քարինքն աղաղակեցեն (Ղուկ. ԺԹ, 41): Քարինք պատուականք (Պատկ. Ի քարէ պատուականէ. Սաղմ. փ, 4): Ոչ մնացէ քար ի

քարի վերայ: Դեկ քար ի վերայ քարի: Քար զայրակողութեան: Քար հատանել:

Վեմ բառով ունենք միայն վեմ զայրակողութեան: Սակայն այս երկու համանիշները հաճախականության կողմից իրար չեն գիշում:

Վեմ-ը կիրառված է 160 անգամ, քար-ը՝ 152:

Հետաքրքրական է տի և ցերեկ բառերի համանիշությունը ևս: Ամենից առաջ նշենք, որ ցերեկ բառի հաճախականությունը սակաւ է՝ ընդամենը 20, միևնույն տի գործածված է 110 անգամ: Ցերեկ բառը գոյականի կիրառությունը բնավ չունի, միայն մակբայաբար է գործածվում և այն էլ առանց որևէ հոլովման, միայն հայցականի ձևով առանց զ-ի կամ զ-ով, օրինակ՝ Եւ Աստուած առաջնորդէր նոցա ցերեկ սեամբ ամպոց (Ելք ԺԳ, 21): Զգայգ և զցերեկ ցանկացեալ նմ տեսանել զբեզ (Բ Տիմ. Ա, 3): Տի բառը հաճախ է գալիս և՛ գոյականաբար, և՛ մակբայորեն. կոչեաց Աստուած զյոյսն տի (Մննդ. Ա, 5): Եւ եղև ետ քառասուն տուրնցեան և քառասուն գիշերոյ ետ ինձ տեր զերկուս տախտակսն (Բ Օրէնք, Թ, 11): Եւ ես կացի ի յերիմն զքառասուն տի և զքառասուն գիշեր (Բ Օրէնք Ժ, 10): Պահէին զյորունս ի տուէ և ի գիշերի (Գործք Թ, 24):

Տի բառը հոլովված է հայցական, սեռական, տրական, բացառական հոլովներով. հին բացառականը՝ ի տուէ ներգոյականի, ավելի միշտ մակբայի նշանակություն ունի: Խաարեացի յերկրի լոյս ի տուէ (Ամուս Ը, 9): Ի տուրնցեան մինչև ի գիշեր մատնեցալ (Ես, ԼԸ, 13): Անկեալ կան ի տօթի տուրնցեան (Բարութ Բ, 25): Ի գիշերի իբրև ի տուրնցեան կայ (Սիրար ԼԸ, 28): Երկու բառն էլ որևէ նյութավորում չեն տալիս, միայն տի բառը հին դարձվածքային մի գեղեցիկ միավոր ունի՝ ի տուէ և ի գիշերի (գիշեր-ցերեկ). Խորհեացի նա ի տուէ և ի գիշերի (Սաղմ. Ա, 2):

Հարուստ համանիշային զանազանություններ, բառակազմական ու դարձվածային միավորներ են կազմում նաև գործել, կատարել, շինել և առնել բայերը. Գործել բայի առաջին նշանակությունն է **հյուսել**. Գործ անկուածոյ վակասի գործեցին զնա (Ելք, ԼԹ, 4): Կինն իմ մանէր և գործէր (Տովբիթ, Բ, 19): 2-րդ. **մշակել**. մարդ չէր, որ գործեր երկիր (Մննդ. Բ, 5): Այգիս տնկեցես և գործեցես:

Յրդ. Որևէ բան անել. Եւ ասեն ցԱրրահամ. Աստուած ընդ ինչ է յամենայնի գինչ և գործես (նույն տեղում, ԻԱ, 22): 4-րդ նշանակությունն է իրեն թույլ տալ, սխալ գործել, չար բան անել. եւ ասէ Տէր Աստ-

ուած ցկիւնն, զի՞նչ գործեցեր զայդ (նույնը, Գ, 13): **Ջիւն գործեցեր** զայդ ընդ իս, զի ոչ պատմեցեր, եթէ կին քո է (ԺԲ, 18): **5-րդ նշանակությունն է շինել, պատրաստել**. Եւ զաղիսն հրամայեն մեզ գործել (Ելք Ե, 16): **Ջէնդ** և զարդդ, գոր գործեցեր (Ա Մակ. ԺԵ, 7): **6-րդ նշանակությունն է աշխատանք անել, աշխատել, բանել**. **Ջվեց** օր գործեացես և արացես զամենայն զգործն քո. յաւորն երթնէրորդի շաբաթ տեսուն Աստուծոյ քոյ մի գործեացես (Ելք Ի, 9—10): **7-րդ նշանակությունն է ստեղծել, գոյացնել**: Յառաջ քան զյաիտեանս հաստատեաց զիս... նախքան զանդունդս գործել (Առակք Ը, 24): **8-րդ. Փարել**: Դրով գործեաց և դրօշեաց զնա (Ես. Խդ, 12): **9-րդ. քանդակել**. Եւ ի վարձու ունիք զուկերիչս գործել կոռս ձեռագործս (Ես. ԽԶ, 6): **10-րդ. Եփել պատրաստել**. Այր ոմն գործեաց ընթրիս (Ղուկ. ԺԴ, 16):

Գործել բայով կազմված կան բազմաթիվ դարձվածքային կապակցություններ. ինչպես՝ գործ գործել, արդարություն գործել, պղծություն գործել, սպանումն գործել, չար գործել, իրաւունս գործել, մահ գործել, բարի գործել, գործ սպասու գործել, գործ սպասաւորութեան գործել, վնաս գործել, անօրէնություն գործել, գործ մշակութեան գործել, ամբարտաւանություն գործել, անօրէն գործել, խռովություն գործել, անպատեհս գործել, մեղս գործել, ցանկություն գործել, զանումն մարմնոյ գործել, կատարումն գործել:

Գործել բայը բառակազմական մի շարք ճյուղավորումներ ունի. գործած, գործակալ, գործակալություն, գործակից, գործակցություն գործավար, գործատեաց, գործաւոր, գործաւորություն, գործելի, գործի, գործուած, գործօն:

Հաճախականությունն է 464:

Ծինել բայի առաջին նշանակությունն է կառուցել. եկայք **շինեացուք** մեզ քաղաք և աշտարակ (Ծննդ. ԺԱ, 4):

2-րդ նշանակությունն է պատրաստել. Ծինեցից ազգէ յազգ աթոռ քո (Սաղմ. ԶԸ, 5): **8-րդ նշանակությունն է դարձնել, հաստել, ստեղծել, վերածել**: **Ծինեաց** տէր Աստուած զկողն, գոր առ յԱդարայ, ի կին (Ծննդ. Բ, 22): **4-րդ նշանակությունն է շեն մնալ, (չեզոք)**. Աշխարհս ողորմութեամբ շինեացի (Սաղմ. ԶԸ, 3): **5-րդ նշանակությունն է կատարելագործել, զարգացնել**. միսիթարեցէք զմիմեանս և շինեցէք զիրեարս (Ա Թեաղ. Ե, 11):

Իմաստային առումներով **շինել** բայը աղքատ է գործել բայի համեմատությամբ, մանավանդ թէ դարձվածքների բաղադրիչ չի դառնում: Սակայն բառակազմական

լայն ցանցով է օծուված. **շեն, շինել, շինած, շինուած, շինութիւն, շինող**: Հաճախականությամբ համարյա չի զիջում գործել բային (416):

Կատարել բայի առաջին նշանակությունն է զլուխ բերել, ավարտել: Եւ կատարեաց Աստուած յաւորն վեցերորդի զգործս իւր (Ծննդ. Բ, 2): **2-րդ. անել**. զինչ **կատարելոց** իցէ Աստուած (Թիւք. ԻԳ, 23): **8-րդ. լրացնել**. **կատարիցէ** զաւորս ուխտին (Թիւք Զ, 13): **4. Կարճել, վերացնել, խզել**. **Կատարեա** դու զկեանս սոցա (Տովք. Ը, 19): **5. Ավանդել, փշել**. **կատարեաց** զհոգին իւր ի վերայ մահնացն (Տովք. ԺԴ, 13): **6. Կատարեալ լինել**: Ընդ առն կատարելոյ կատարեացիս (ԲԹագ. ԻԲ, 26):

Այս նշանակությունները նրբավորվում են բազմաթիվ դարձվածքային կապակցություններով. **պատուէր, փորձություն, անիրաւութիւն, առակ. կամք, ցանկութիւն, տօն, անօրէնություն, ուխտ, բարկութիւն, պաշտօն, սրտմտութիւն, հրաման, աղօթք, բան, չարիք, օրէնք, խորհուրդ, գործ, պատգամ** բառերով բազմաթիվ անգամ կիրառված են հարադրական բարդություններ: Օտար կազմություն պետք է համարել **կատարել զձեռս ուրումն**=քահանայագործել, քահանա օծել: Բառաբարդման ճյուղավորումներով աղքատ է **կատարել** բայը. **կատար, կատարած, կատարիչ, կատարումն**: Իսկ գործածության հաճախականությունն է 250:

Այս բայերին համանիշ է **նաև առնել** բայը, բայց դարձվածքային միավորներով, իմաստային հարստությամբ և հաճախականությամբ գերազանցում է բոլորին, որովհետև եթէ նախորդները այսպես ասած տեղային կամ բնագավառային կիրառություն ունեն, առնելը համածողովկական է. չկա մի բարբառ կամ խոսվածք, որ չունենա առնել բայը: Գուցէ այս պարագայում **շինել** բայը մրցության ելնի սրա հետ, իսկ **գործել** և **կատարել** բայերը սահմանափակ կիրառություն ունեն:

Առնել բայի առաջին և հիմնական նշանակությունն է **ստեղծել, չեղածից գոյացնել**. Արար Աստուած գերկին և գերկիր (Ծննդ. Ա, 1): Երկրորդ նշանակությունն է մի գործողություն կատարել. Եւ ընկեց Ահարոն զգաւազանն առաջի փարաւնի... և եղև վիշապ... եւ արարին գետքն եգիպտացոց կախարդութեամբ նոյնպէս (Ելք Է, 10—11): **3. պատրաստել**: Եւ կարեցին տերևս թգենոյ և արարին իրեանց սփածանելիս (Գ, 7): **4. Որևէ արարք թույլ տալ**: Օձն յաքեաց զիս և կերայ: Եւ ասէ Տէր Աստուած ցօձն. փոխանակ զի արարեր դու զայն,—անիծեալ լիջիր (Գ. 14): **5. Ծի-**

նել: Արդ արա դու քեզ տապան ի չորեք-
կուսի փայտից (2, 14): 6. Կառուցել. Եւ
երբ առնիցեն ինձ տուն (Լ, 30): 7. Վար-
վել, վերաբերվել: Եւ սրահեցաւ Նոյ ի գին-
ւոյ անտի իրսէ և գիտաց գինչ արար ընդ
նա որդիս իւր կրտսեր (Թ, 24. որդին եղ-
բայրներին հաշտեցել է, որ իրենց հայրը
հարբել է և մերկ է): 8. Անվանել, կոչել,
դնել. Եւ ասեմ այր ցնկեր իւր... արասցուք
մեզ անուն յառաջ քան զսփոել ի վերայ
երեսաց ամենայն երկրի (ԺՆ): 9. Վերա-
ծել, դարձնել: Եւ արարից զքեզ յագգ մեծ,
(ԺԲ, 2): 10. Վնասել, չար բան անել. Մի
մխեր գնեալն քո ի պատանեակդ ի մի ինչ
առներ դնաւ (ԻԲ, 12): Եփել-պաշարաստել.
Եւ որսա ինձ որս. և արա ինձ խորտիկս,
որպէս ես սիրեմ (ԻԷ, 4): 11. Կարգել,
նշանակել. Տէր արարի գնա քեզ և զամե-
նայն եղբարս նորա արարի նմա ծառայ
(ԻԷ, 37): 12. Ի կատար անել, կատարե-
լով ավարտել. Զի ոչ թողից զքեզ մինչև
արարից զամենայն ինչ, զոր խօսեցայ ընդ
քեզ (ԻԷ, 15): 13. Կարել, հյուսել. Եւ արար
ննան պատմունան ծաղկեայ (ԼԷ, 3): 14.
Զեռնարկել: Եւ զամենայն գինչ, և առներ.
Տէր յաշողեր (ԼԹ, 3): 15. Պաղաքերել,
արտադրել, բերք տալ. Եւ արար երկիրն
յետքն անս լիութեանն արդիւնս (ԽԱ, 47):
16. Քանդակել, տաշել, մի արասցես դու
քեզ կոտս ըստ ամենայն նմանութեան
(Ելք, Ի, 4): 17. Զոհել, մատաղել. Եւ
զգուարակն գլխան մեղաց արասցես յա-
տուրն սրբութեան (ԻԹ, 36): 18. Կռել, կո-
փել. Արասցես Վահանակս յոսկոյ սրբոյ
(ԻԷ, 13): Արարից իրեանց որք ձուլածոյ
(ԼԲ, 8): 19. Նկարել. Եւ արդ՝ արարէք
զպատկերս երաստանաց ձերոց (Ա. Թագ.
2, 5): 20. Սօսել, ասել: Ոչ առնէ հայր իմ
բան մի մեծ կամ փոքր, զոր ոչ յայտնէ
յունկն իմ (Ա. Թագ. Ի, 2): 21. փորել
(փոսի մասին). Զի արարէք դուք զգործն
զայն (Բ. Թագ. Բ, 5): 22. Տնկարկել: Եւ
նոսեցէ գնոտս յայնկոյս գետոյն, փոխա-
նակ զի «արարից իրեանց անտառս բար-
կացուցանել զտէր (Գ. Թագ. ԺԳ, 15):
23. Կատարել, վարել. Արդ՝ այդպէս առ-
նիցես զթագաւորութիւնդ ի վերայ Իսրայել-
ի (Գ. Թագ. ԻԱ, 7): 24. Գտնել, ձեռք բե-
րել. Արարից զոյժոյս և ընկերշակեցին (Գ.
Թագ. ԺԷ, 10): 25. Պատրաստություն տես-
նել. Ոչ պաշար արարից իրեանց ճանա-
պարհին (Ելք ԺԲ, 39): 26. Համարել, մե-
կի կամ մի բանի տեղ դնել: Միթէ դու մեծ
ինչ որ իցես, քան զհայր մեր Աբրահամ,
որ մտաւ... արդ դու զո՞ առնես զքեզ
(Յովհ. Ը, 53): 27. Ծաղախել. եթուք ի գե-
տին և արար կա ի թրոյն և ծեփեաց
զկան ի վերայ աչաց կտրին (Յովհ. Թ,

6): 28. Հարություն տալ, կենդանացնել. Ոչ
կարէր սա, որ երաց զաչս կտրին առնել
զմեռեալն յարուցանել (Յովհ. ԺԱ, 37,
տես և 42, 45): 29. Բաժանել, կիսել: Ասին
զհանդերձս նորա և արարին չորս մասու-
նքս (ԺԹ, 23): 30. Ստանալ, ունենալ. մոտ
առ աղջիկդ իմ, զի արարից ինձ որդի ի
դմանէ (Ծննդ. Ժ2, 2): 31. Լինել, մնալ
(կրավորաձեր), մի ի բացեայ առներ ի-
նէն (Սաղմ ԻԱ, 12): 32. Դասավորել. Եւ
արար զերկուս աղախնայսն և զորդիս նո-
ցա առաջի, և զԼիա և զորդիս նոցա զկնի
(Ծնն. ԼԳ, 2): 33. Մի շարք բալերի տալիս
է նաև պատճառականի նշանակություն.
Արի, սրբեա զծողովորդ, և արասցես սրբ-
քել առ վաղիս (Յես. Է, 13):

Իսկ կիրառության հաճախականությամբ
տասնյակ անգամ գերազանցում է իր հա-
մանիչներին՝ 1440 կիրառություն: Բառա-
կազմության եզրերն են առնելի (արա-
բող), արարող, արարիչ, արարած, արար-
չագործ, արարչապետ, արարչություն, ա-
րարք, արդիւնարար, խորտկարար: Բառա-
կազմական միավորները ըստ իր հաճա-
խականության քիչ են, բայց դրա փոխա-
րեն մի բանի տասնյակ դարձվածքային
միավորներ է կազմում, որոնց մեջ հանդես
է գալիս բազմազան իմաստներով ու ներ-
բություններով: Այդպիսի կազմությունների
մեջ իր հարադրյալի հետ հաճախ կազմում
է մի բայ. օրինակ՝ այց առնել, ծաղր առ-
նել, սուրբ առնել, պատերազմ առնել (այ-
ցելել, ծաղրել, սրբել, պատերազմել):
Պետք է նկատի ունենալ, որ բաղադրյալ և
պարզ ձևերի մեջ մտքը իմաստավորումներ
կան: Երբեմն բայը պահպանում է իր այս
կամ այն իմաստը, երբեմն էլ բոլորովին
նոր իմաստով է հանդես գալիս. օրինակ՝
պաշտօն առնել-պաշտօնումը կատարել,
կամ ծառայություն մատուցել: Զար առնել—
չարիք գործել: Կոչումս առնել—կոչումքի
կանչել կամ կոչումք կազմակերպել:

Մեկ հազար չորս հարյուր քառասուն
կիրառության մեջ առնել բայը դարձվածա-
յին միավորներ է կազմում արդարութիւն,
առաջի, անորդի, անիրաւութիւն, անբակ,
աչպն, ապախտ, աջ, աջելութիւն չաժօթ,
անպարտ, արուեստ, աղտեղի, անզգամու-
թիւն, ի բացեայ, բան, բարի, գործ, զար-
շութիւն, գէշ, դադար, դատաստան. զօրու-
թիւն, զոհ, զատիկ, զենկի, ընդունելութիւն,
ընծայ, թագաւոր, թողութիւն, թշնամանք,
իրաւունք, լսելի, խոնարհ, խելամոտ, խա-
բէութիւն, խաղաղութիւն, խոստովան, խրա-
խութիւն, խարդախութիւն, ծաղր, ծափօթ,
կարթակոտոր, կոչուք, կամք, հանդես,
հրաման, հաճոյք, հեռի, ճշմարտութիւն,
մեծարանք, յողարկութիւն նախատինք,

ճկուն, նուր, նշան նաակատիք, ողջակեզ, որդի, ողորմություն, ուղիղ, ուրախ, ուղղութիւն, չար, պաշար, պատուիրան, պատասխանի, պղծութիւն, պաշտօն, պատերազմ, պատգամ, սուրբ, սրտակաթ, սքանչելիք, սուգ, սրբութիւն, վաճառ, վրէժխնդրութիւն. տօն, փորձ, փառք, փրկութիւն, քառութիւն, օրհնութիւն և այլն: Թվում է, թէ հիշյալ միավորները այս ցանկով չեն սպառվում:

Հասանելիների այս զուգադրությունը ցույց է տալիս, որ բառերի մի մասը եղել է ընդհանուր համածողովորդական, իսկ մյուս մասը տեղական կամ ոճաբանական բնութագրով է հանդես եկել: Առավել ևս համանիշային զուգադրի իմաստները գոմէ հիմնական նշանակությունների մարզում իրար չեն ծածկել, իսկ ճշտավորումների մեջ դրանք ևս ինքնուրույնություն են հանդես բերել թե՛ հաճախականության և թե՛ բառակազմության ու դարձվածաբանական մարզերում: Մեր թարգմանիչները համանիշների այնպիսի նուրբ զանազանություններ են ցուցադրել, որ այսօրվա ընթերցողին և ուսումնասիրողին զարմանք են պատճառում: Առաքել և արձակել բայերը համանիշ են ընդհանուր ուղարկել նշանակությամբ, սակայն առաջինը նպատակային ուղարկումն է արտահայտում. եւ առաքեաց գնեզ տէր սատակել զսա (Ծննդ. ԺԹ, 13): Իսկ արձակել բառի հիշյալ նշանակությունը սոսկ ուղարկելն է, և այն էլ երկրորդական նշանակությամբ. Եւ յորժամ արձակեաց զնոսա Յեսու ի տունս իւրեանց, և օրհնեաց զնոսա (Յեսու, ԻԲ, 7): Յուդարկել բայը նշանակում է ճանապարհ դնել և հենց այստեղից էլ սկսում է ստանալ ժամանակակից նշանակությունը. զան որդիքն քո, զորս յուղարկեցիր (Բարութ, Դ, 11): Յուդարկեցին զնա ի նաւ անոր (գործ. Ի, 37):

Համանիշ բառերը բացահայտում են նաև ընդհանուր համագային բառերը և բառապաշարի տեղական շերտերը, որոնք այս կամ այն թարգմանիչի միջոցով մուտք են գործել Աստվածաշունչը: Այդպիսի տեղական բառերի միջոցով կարելի է մինչև իսկ նշտել Աստվածաշունչի այս կամ այն գրքի թարգմանչի ծննդավայրի խնդիրը և այն, թե որ գրքերն են միևնույն թարգմանչի գործը: Մանրակրկիտ համեմատական ուսումնասիրությունը կարող է ի հայտ բերել այս կամ այն գրքի թարգմանիչին, եթե այդ թարգմանիչը ունի ինքնուրույն գրվածք: Այսպես՝ դպիր բառը իբրև գրագիր քարտուղար ընդհանուր է, իսկ աստեճադպիր բառը այդ նույն նշանակությամբ գործածված է, միայն Բ Օրինաց գրքում չորս անգամ. արանց համանիշ գրիչ բառը միևնույն

նշանակությամբ միայն եզրի, Նեմի գրքերում է հիշատակվում: Հետագա դարերում շատ կիրառված յաղագս բառը միայն 4 անգամ կիրառված է Մնացորդաց գրքերում. խօսեցար յաղագս ծառայի քոյ (Ա Մնաց. ԺԷ 17): Եւ արդ տէր, բանն, զոր խօսեցար ընդ ծառայի քում և յաղագս տան նորա, հաւատարիմ լիցի մինչև յաւիտեան (նույն տեղում, 23): Ապա երկու օրինակ էլ ԻԹ 30-ում և Բ Մնաց. ԺԼ 12-ում: Այդ նույն բառը մի անգամ էլ աղագս ձևով կիրառված է Ա Տիմ. Ե 14-ում: Կամիմ գնանկամարդացո՞ւ ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս լինել և մի ինչ պատճառս տալ հակառակորդին ի հայհոյութեան աղագս (պետք է լիներ յաղագս հայհոյութեան): Մի անգամ էլ գտնում ենք Ծննդոց գրքում իբրև համանիշ վասն կապի. Զի բարի լիցի ինձ վասն քո և կեցցե անձն իմ յաղագս քո (ԺԲ 13):

Հազվագյուտ այս բառի փոխարեն համատարած կիրառված է վասն կապը: 5-րդ դարի առաջին կեսում յաղագս կապը Բուզանդ ունի. Ագաթանգեղոսը, Եզնիկը, Կորյունը չեն գործածել. միայն Ագաթանգեղոսը ունի գոյականի կիրառությամբ. Փոխ ևս ի պարտուցն ի վերայ առեալ, տներս երկպատիկ օգտութեան էի աղագս գտանել կարասցեն՝, որ աղագս նշանակում է միջոց, հնար, ճանապարհ:

Ագի բառը երկու անգամ միայն ունենք Յայտնության գրքում, որ ուշ շրջանի թարգմանություն է համարվում, մինչդեռ տոտն և տտուն համանիշները ընդհանուր են և ագի և այլ նշանակություններով:

Ամբար կիրառված է միայն Ա Մնացորդաց ԻԸ 12-ում և այն էլ իբրև համանիշ շտեմարան ընդհանուր բառին:

Աճիւն բառը գտնում ենք միայն Բ Մակաբայեցիների գրքում և Բ Պետրոս առաքյալի թղթում, իսկ դրանով կազմված աճիւնախառն բարդ բառը միայն երկու անգամ կա Տովբիտ Զ 18-ում և Ը 2-ում: Իսկ համանիշ մոխիր-ը կա բազմաթիվ գրքերում ավելի քան 40 անգամ:

Նշկահել հազվադեպ բառը միայն Դ Թագաւորաց գրքում է գործածված և այն էլ 8 անգամ: Ստույգ նշանակությունը ճշտված չէ. բազատրվում է ապստամբել, ընդվզել, մերժել, արհամարհել, անգոսնել, լուծը թողափել բառերով: Որոշ օրինակներ ունեն հայգականով խնդիր հետևյալ ձևով. Նշկահեցեր զիս (ԺԸ 20) և այլն: Այդպիսի խնդրառությունը թելադրում է բառը բացատրել արհամարհել, իբրև իշ-

¹ Ագաթանգեղայ Պատմ, Հայոց, Տիգիս, 1909, էջ 4:

խող ալյևս չճանաչել: Իսկ կան օրինակներ, որտեղ իմաստը ապստամբել, ընդվզել է. օրինակ՝ Եր յաւուրս նորա **նշկահեաց** Եդովմ ի ներքուստ ձեռին Յուդայ և թագաւորեցոյց ի վերայ իւր թագաւոր (Ը 21):

Այս բառը 5-րդ դարում Բուզանդն ու Խորենացին են գործածել: Խորենացին 5 անգամ ունի այդ բայը և ապստամբել և արհամարհել նշանակություններով. Աղմուկ շփոթից իմն լեալ յարևմոտս՝ ընդ որ վրստահացեալ Արտաշէս՝ **նշկահեալ** ընդդիմանայ Հռոմայեցոցն տէրութեանն՝ ոչ տալով հարկս (2-րդ ԾԻ): Այստեղ **նշկահել** կենդանակի ապստամբել, իսկ հետևյալ օրինակում կիրառված է իբրև համանիշ արհամարհել բայի համար. Չայս լուեալ Պապայ արհամարհեալ **նշկահեաց** (3-րդ ԼԹ): 5-րդ դարում երեք անգամ ևս կիրառված է, մեկ անգամ ունի Բուզանդը և երկու անգամ Կիրեղ Երուսաղէմացու Կոչումն ընծայութեան-ը:

Մինչդեռ արհամարհել և ապստամբել բայերը կիրառված են բազմաթիվ անգամ և Աստվածաշնչի շատ գրքերում:

Ողջ Աստվածաշնչում առագ բառը իր հարակիցներով՝ առագամեմար, առագանի, առագոյթ, առագոյթին, միայն գտնվում է Մակարայեցոց գրքերում. առագ՝ չորս անգամ, առագամեմար՝ մեկ անգամ, առագանի՝ երեք անգամ, առագոյթ՝ մեկ և առագոյթին երեք անգամ: Միայն առագափող կա Եսայի ԻԷ 13-ում: Սա պատահականություն չէ, համանիշ անդրանիկ, երեք բառերը բազմաթիվ գրքերում և բազմաթիվ անգամ են կիրառված, մինչդեռ Մակարայեցիների գրքում միայն մեկ անգամ կա **անդրանիկ**:

Արտ բառը գործածված է երկու անգամ Սաղմ. ՃԶ 37-ում և Եսայի ԻԷ 4-ում. Սրանից կազմված արտորայք-ը մեկ-մեկ անգամ չորս Ավետարաններում, իսկ ընդհանուր անդ և անդաստան բառերը չունեն

Սաղմոսները և Եսային, մինչդեռ առաջինը կիրառված է 75 անգամ, իսկ երկրորդը՝ 32:

Համանիշներով կարելի է կլինել որոշել Աստվածաշնչի առանձին գրքերի թարգմանիչներին, եթե այդ գիրքը ընդհանուր խմբագրման ենթակա չդառնար Սահակի և Մեսրոպի կողմից, որոնք լեզվական կենտրոնախույս ձևերը չեզոքացրել են հոգուտ ընդհանրականի:

Ինչպես տեսնում ենք, Աստվածաշունչը մեր բազմադարյան գրական լեզվի այն առատարբուխ աղբյուրն է, որի վտակները ավելի քան հազար հինգ հարյուր տարվա մեջ ոռոգել են մեր գրական լեզվի անդաստանը՝ տալով նրան ավելի քան տասը հազար բառ, որոնք գալով համաժողովրդական խոսքից, բարբառներից, օտար ակունքներից այստեղ են գրական քաղաքացիություն ստացել, այստեղ են ոճավորվել և հետագայում էլ այստեղից են անցել մեր լեզվին իբրև գրական բառեր:

Մեր գրական լեզուն այստեղից ժառանգել է համարյա բառերի չափով դարձվածքներ, որոնք դարերի ընթացքում որոշ փոփոխություններ կրել են անշուշտ, սակայն խոր արմատներ ունեն Աստվածաշնչում: Աստվածաշունչը ոճավորել է մեր գրական լեզուն հնագեղության արվեստով, դասական ոճի բարձր հատկանիշներով, և այսօր էլ պատմական, կրոնաքաղաքախոսական, հնարամական ոճավորման սովածքները, մեր գրական լեզուն առնում է այնտեղից:

Հայերեն Աստվածաշունչը թարգմանության պատմության, կաղապար-բնագրերի բացահայտման, ուրիշ թարգմանությունների հետ ունեցած հարաբերությունների և այլ տեսակետներից մասամբ ուսումնասիրված է, սակայն նրա լեզվաոճական գանձերը դեռևս կարոտ են լայն հետազոտման:

(Ծարմնակելի)